



## ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ Դմիտրի Մենդելեևի պարբերական աղյուսակի 150-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ

Սույն թվականի սեպտեմբերի 24-ին ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ Դմիտրի Մենդելեևի պարբերական աղյուսակի 150-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ:

Նիստը բացեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: Շնորհավորելով ներկաներին՝ քիմիական տարրերի Դմիտրի Մենդելեևի պարբերական աղյուսակի 150-ամյա հոբելյանի կապակցությամբ Ռադիկ Մարտիրոսյանն ասաց. «Մենք՝ բոլորս, հպարտանում ենք, որ մեր հայրենակից, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Յուրի Յուլիսի Յովհաննիսյանը վճռորոշ ներդրում ունի մեր քիմիական տարրերի կանխագուշակման և սինթեզի բնագավառում: Նրա անվան հետ է կապված պարբերական աղյուսակի յոթ մոտ քիմիական տարրերի հայտնագործությունը: Դա հնարավոր եղավ իրագործել Յուրի Յովհաննիսյանի կողմից գերծանր ատոմների միջուկների կառուցվածքից կախված «կայունության կղզու» հայտնագործման շնորհիվ: Այդ հայտնագործությունը կարելի է դասել մատերիայի ինքնակազմակերպման հիմնարար օրենքների թվին: Յուրի Յովհաննիսյանի ակնառու հայտնագործությունների շարքի ճանաչումն արտահայտվեց նրանով, որ 2016 թ. IUPAC-ը որոշեց ի պատիվ ակադեմիկոս Յովհաննիսյանի՝ նրա ղեկավարությամբ ստացված 118-րդ ատոմական համարով տարրն անվանել oganesson»:

«Ուրախ եմ, որ ակադեմիան նույնպես ներգրավված է Մենդելեևի պարբերական աղյուսակի ստեղծման 150-ամյակի միջո-



ցառումներին, որոնք ամբողջ աշխարհում են տեղի ունենում: Հայաստանը դրանից անմասն չէ և հատկապես վերջին տարիներին անմասն չէ, որովհետև մեր մեծ գիտնականի անվան հետ էլ է կապվում աղյուսակում որոշակի գործընթացներ և հայտնագործություններ», - ասաց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Զարությունյանը: Նա ընթերցեց ՀՀ նախագահ Արմեն Սրազյանի ուղերձը, որում նշված է. «Հանդիսավոր նիստի հարգելի մասնակիցներ, ջերմորեն ողջունում եմ բոլորիդ՝ ակնկալելով, որ այս միջոցառումը ոչ միայն փորձի, տեղեկատվության փոխա-

նակման լուրջ հարթակ կդառնա, այլև գիտական համագործակցության ամրապնդման հնարավորություն կընձեռի և կնպաստի մեր կապերի ստեղծմանը: Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում կազմակերպված այս միջոցառումը նվիրված է մի իրադարձության, որը շրջադարձային է եղել համաշխարհային գիտության զարգացման համար: Ռուս տաղանդավոր գիտնական Դմիտրի Մենդելեևի ստեղծած պարբերական աղյուսակն այն մեծագույն նվաճումներից է, որն առաջացիկ մշակակություն է ունեցել ոչ միայն իր ժամանակի, այլև հետագա տասնամյակների համար: Այն այսօր էլ

շարունակում է մնալ հիմնարար և կուռ մի համակարգ հետագա գյուտերի և հայտնագործությունների համար: Պարբերական աղյուսակի պատմությունը մարդկային մտքի և ոգու կարողություններն ի ցույց դնելու լավագույն օրինակ է, որի շնորհիվ գիտությունն ու մարդկությունը շարժվել են առաջ: Միաժամանակ, այն անհատի հանճարեղ մտքի և միջազգային հետազոտական ջանքերի համադրության հրաշալի մոդել է: Խոսելով պարբերական աղյուսակի հոբելյանի մասին՝ չենք կարող չնշել Հայաստանի քիմիկոսների և ֆիզիկոսների՝ ամբողջ աշխարհում ճանաչում գտած, արդյու-

➤2

## Կայացավ «Քիմիա և քիմիական տեխնոլոգիաներ» VI միջազգային գիտաժողովը

Սույն թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ ԳԱԱ-ում մեկնարկեց «Քիմիա և քիմիական տեխնոլոգիաներ» VI միջազգային գիտաժողովը: Գիտաժողովի նպատակն է վերլուծել ու քննարկել քիմիայի և քիմիական տեխնոլոգիաների բնագավառում տեսական և կիրառական հետազոտությունների գիտատեխնիկական տեղեկատվության արդի վիճակն ու առաջընթացը:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Մ. Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն Կարեն Գրիգորյանը՝ ներկայացնելով գիտաժողովի ծրագիրը:

Մասնակիցներին ողջունեցին քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Լևոն Թավադյանը և Երևանում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի տնօրեն Սերգեյ Ռիբինսկին:

Գիտաժողովի թեմաներն էին՝

- Անօրգանական նյութերի և միացությունների քիմիան և տեխնոլոգիան
- Հանքային և երկրորդային հումքի



վերամշակման քիմիամետալուրգիական գործընթացները

- Սիլիկատների և հատուկ մաքրության նյութերի տեխնոլոգիա
- Հոմոգեն, նանոչափ և կոմպոզիցիոն նյութերի տեխնոլոգիա
- Գերկարծր նյութերի քիմիա և քի-

միական տեխնոլոգիա

- Կոմպլեքս միացությունների քիմիա
- Քիմիական տեխնոլոգիայի գործընթացներ և սարքավորումներ
- Քիմիական և մետալուրգիական արտադրությունների էկոլոգիական

հիմնախնդիրները

■ Քիմիական արտադրությունների, տեխնոգեն և բնական օբյեկտների նկատմամբ վերլուծություն և վերահսկողություն

■ Քիմիական տեխնոլոգիաների և բնապահպանական ճարտարագիտության ոլորտների կրթական համակարգ

■ Հավելման տեխնոլոգիաներ:

Գիտաժողովին մասնակցում էին անվանի քիմիկոսներ, տեխնոլոգներ, երիտասարդ մասնագետներ՝ Հայաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, Ուկրաինայից, Վրաստանից, Բելառուսից, Ուզբեկստանից, Իսրայելից:

Գիտաժողովը կազմակերպվել է ՀՀ ԳԱԱ Մ. Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունքի, ՌԴ ԳԱ Ն. Ս. Կուլնակովի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի, Դ. Ի. Մենդելեևի անվան ռուսական քիմիական ընկերության, ՌԴ ԳԱ «Քիմիական տեխնոլոգիաներ» գիտական խորհրդի, Երևանում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի կողմից, ՀՀ ԿԳՄՍՆ գիտության պետական կոմիտեի և ՀՀ ԳԱԱ ֆինանսական աջակցությամբ:



# ԱՆՄՈՒՋՑ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԸՈՎԸԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ԵՎ ԿՈՄԻՏԱՍԻՆ



Հայ ազգային երկու հանճարները՝ Ռոմանոս Թումանյանն ու Կոմիտասը, հիրավի համամարդկային մեծություններ են: Սեպտեմբերի 19-22-ը Մոսկվայում տեղի ունեցավ նրանց ծննդյան 150-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով, որն իրականացվեց հիմնականում Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայ առաքելական եկեղեցու թեմի առաջնորդ Եզրաս սրբազանի, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ նյութական աջակցությամբ:

Գիտաժողովի կազմակերպմանը իրենց նպաստն էին բերել մի շարք արժանավոր մարդիկ, որոնց մեջ պետք է առանձնացնել Բուրաստան Ջուլույանին, որը Մոսկվայի եպիսկոպոսական թեմի հայագիտական կենտրոնի պատասխանատուն է, միաժամանակ Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի և Մ.Ա. Բեդյանի անվան գրականության ինստիտուտի փոխկապերի համակարգողը: Այդ խնդրում պետք է կարևորել ՀՀ ԳԱԱ Մ.Աբեդյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Վարդան Դերիկյանին, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանին: Վերջինիս ներկայությունն ու ելույթներն առանձնակի շուրջ հաղորդեցին գիտաժողովին:

Սեպտեմբերի 19-ին ժամը 16-ին, Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտում տեղի ունեցավ վաստակաշատ թունամյանագետ Սուսաննա Հովհաննիսյանի մեծարժեք ու ծանրակշիռ գրքի շնորհանդեսը: Գիրքը կոչվում է. «Жизнь Ованеса Туманяна» և այն հրատարակվել է ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները հովանավորող հիմնադրամի միջոցներով: Այստեղ, իհարկե, շնորհակալական խոսք պետք է ուղղել ակադեմիկոս Յուրի Սուվարյանին և ակադեմիայի նախագահությանը՝ ամենայն Հայոց բանաստեղծ Թումանյանին նվիրված երկու ստվարածավալ մենագրություններ հրատարակելու համար՝ դրանք ռուսալեզու ընթերցողին ծանոթացնում են հայ հանճարին և նրա ստեղծագործությանը: Գրքի հիմնալի թարգմանության հեղինակն է տաղանդավոր բանաստեղծ Գուրգեն Բարեմցը:

Սուսաննա Հովհաննիսյանի գրքի շնորհանդեսի ժամանակ ելույթ ունեցան և հիացական խոսքեր ասացին Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի գիտական տնօրեն, Ռուսաստանի Դաշնության ակադեմիայի ակադեմիկոս Ալեքսանդր Կուդելինը, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, գրականագետներ Վարդան Դերիկյանը, Ալիտա Դուլխանյանը, Բուրաստան Ջուլույանը և Ազատ Եղիազարյանը: Հովհաննես Թումանյանի մասին ջերմ խոսքեր ասաց Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի ՇԻԴ-ի և Ռուսաստանի գրականությունների բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կազեյ Սուլբանովը: Կնքվեց փոխհամագործակցության պայմանագիր Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության և Մ. Աբեդյանի անվան գրականության ինստիտուտների միջև: Ամսի 20-ին և 21-ին գիտաժողովը շարունակվեց հայ եկեղեցու առաջնորդարանում:



Ես մի առանձին հպարտության զգացմունք ունեցա, երբ տեսա Մոսկվայի հայկական եկեղեցին իր բոլոր շինություններով: Անիի ու Աղթամարի հիասքանչ ճարտարապետությունը վերածնվել են Մոսկվայում: Ամենուր մաքրություն ու խնամք, աշխատողների ջերմություն և ուշադրություն: Մոսկվայում գտնվելու 4 օրերի ընթացքում տեսանք բազմաթիվ հայ աղջիկների ու տղաների ամուսնության արարողություններ: Հայկական եկեղեցին Հայաստան էր Մոսկվայում:

Գիտաժողովի լիազույժար միտքը նախագահում էր Յուրի Սուվարյանը, ողջույնի խոսք ասաց Եզրաս սրբազանը: Ողջույնի խոսքեր էին ուղարկել Մոսկվայի քաղաքապետը, համայն Ռուսիո հոգևոր առաջնորդը, Մոսկվայի կոնսերվատորիայի ղեկավարը:

Լիազույժար միտքի ժամանակ զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի փոխտնօրեն, արվեստագիտության դոկտոր Աննա Ասատրյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալիտա Դուլխանյանը, արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանը, Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի բաժնի վարիչ Կազեյ Սուլբանովը, Մ.Աբեդյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր Վարդան Դերիկյանը: Այդ և հաջորդ օրը տարբեր զեկուցումներով հանդես եկան Կոմիտասի անվան կոնսերվատորիայի, «Պատմաբանասիրական հանդեսի», Մ. Աբեդյանի անվան գրականության ինստիտուտի, Խ. Աբովյանի անվան ՀԳՄՀ-ի, սլավոնական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, ՀՀ ԳԱԱ պատմութ-

յան ինստիտուտի, Մաշտոցի անվան Մատենադարանի, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի, Հովհ. Թումանյանի տուն-թանգարանի, Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան համալսարանի գրականագետներն ու արվեստագետները: Թվարկում են նրանց անուններն ըստ կարգաված զեկուցումների հերթականության՝ Հովհաննիսյան Սուսաննա, Սահակյան Լուսինե, Դուլխանյան Ալիտա, Գաբրիելյան Նարինե, Նավասարդյան Վահան, Եղիազարյան Ազատ, Ջուլույան Բուրաստան, Մելիք-սեթյան Լիլիթ, Մնացականյան Եվա, Տիգրանյան Մարիամ, Քերթեմեջյան Դավիթ, Ջիվանյան Ալվարդ, Վարդույան Արփի, Բաղդասարյան Մարինե, Հակոբյան Անի, Ասատրյան Աննա, Հայրյան Ջարուհի, Եղիազարյան Վանո, Տուրքինա Լյուբով, Դերիկյան Շողակաթ, Ջաքարյան Անուշավան, Վարդույան Գոհար, Թոխաթյան Կարեն, Մարամջյան Աիդա: Գիտաժողովի լեզուն ռուսերենն էր, սակայն մի քանի հոգի իրենց զեկուցումները կարդացին անգլերենով:

Հոկտեմբերի 20-ին՝ երեկոյան, Մոսկվայի Չայկովսկու անվան կոնսերվատորիայի մեծ դահլիճում տեղի ունեցավ Կոմիտասի ծննդյան 150-ամյակին նվիրված տոնական համերգ, որի ընթացքում ողջույնի խոսքով հանդես եկավ ՌԴ-ում Հայաստանի Հանրապետության դեսպան Վարդան Տողանյանը: Այնուհետև ելույթ ունեցան Կոմիտասի անվան լարային քառյակը՝ Էդվարդ Թադևոսյանի գլխավորությամբ, Էջմիածնի Մայր աթոռի երգչախումբը՝ Հասմիկ Պողոսյանի գլխավորությամբ, հիմնալի երգչուհի, միջազգային մրցույթների դափնեկիր Հասմիկ Պասյանը և Ռուսաստանի ռազմածովային նավատորմի ցուցադրական նվագախումբը Ալեքսեյ Կարաբանովի ղեկավարությամբ: Կատարվեցին բացառապես Կոմիտասի ստեղծագործությունները, իսկ ռազմածովային նվագախումբը կատարեց ամերիկացի նշանավոր կոմպոզիտոր Ռիդի (1921-2005) հայկական պարերն ու «Փառք Երուսաղեմին» գործերը, որոնց հիմքում ընկած էին կոմիտասյան մեղեդիները:

Ամռոռաց էր Եզրաս սրբազանի կազմակերպած տոնական համերգը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության օրվան՝ սեպտեմբերի 21-ին: Այդ օրը ելույթ ունեցան հայորդաց տան ամենատարբեր տարիքի աղջիկներ ու տղաներ, որոնք կատարեցին Հովհաննես Թումանյանի ու Կոմիտասի ստեղծագործությունները: Ողջ համերգի ժամանակ առաջնորդարանի դահլիճը շնչում էր ազգային ու հայրենասիրական ոգով:

Մեծ լուսավորիչ հաջատուր Աբովյանն ասում էր, թե աշխարհը հային ճանաչելու համար հենց հայը պետք է իրեն ցուցադրի իր լավագույն կողմերով ու գործերով: Մոսկվայի հայ առաքելական եկեղեցու առաջնորդարանը հենց այդ պատգամն էլ իրականացնում է: Առիթվատե՛ղ շնորհակալություններ Թումանյանի ու Կոմիտասի հորեղանակների փայլուն տոնակատարությունն էր:

Ալիտա Դուլխանյան

## Հ ԳՆԱ-ում պեղի ունեցավ Դմիտրի Մենդելեևի...

➤1 Մավետ գիտական հետազոտությունները և ձեռքբերումները: Այսօր միստին մասնակցում է նրանցից մեկը՝ մեր ժամանակակիցը, ակամավոր գիտնական ակադեմիկոս Յուրի Հովհաննիսյանը, ով հսկայական ավանդ ունի գիտության, մասնավորապես, միջուկային ֆիզիկայի զարգացման գործում: Նրա հետազոտական անխոնջ ջանքերի և գիտական գործունեության արդյունքում Մենդելեևի աղյուսակը համալրվել է նրա իսկ հայտնագործած նոր տարրով: Այն կոչվել է մեր մեծ հայրենակցի անունով՝ «oganesson»: Սա մեր ողջ ժողովրդի հպարտությունն է: Վստահ եմ, որ մեր հարգարժան հայրենակիցը կշարունակի իր գիտահետազոտական արդյունավետ գործունեությամբ այսուհետև ևս բարձր պահել հայագիտական միտքը: Կրկին ողջունում եմ ձեզ, մաղթում եմ արդյունավետ աշխատանք և ամենայն բարիք: ՀՀ նախագահ Արմեն Սարգսյան»:

ՌԴ ԳԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Յուրի Հովհաննիսյանը ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի հրամանագրով պարգևատրվեց Սուրբ

Մեսրոպ Մաշտոցի շքանշանով՝ գիտության զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի և ունեցած ակնառու նվաճումների համար: Շքանշանը ակադեմիկոս Հովհաննիսյանին հանձնեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանը:

Ողջույնի ելույթներով հանդես եկան Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, Հայաստանում Բելառուսի դեսպանատան ավագ խորհրդական Սերգեյ Տրոցկոյը, Երևանում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի տնօրեն Սերգեյ Ռիբինսկին, Դմիտրի Մենդելեևի պարբերական աղյուսակի 118-րդ «Oganesson» (Օգանեսոն) տարրի մրցանակակիր Սոֆիյա Այդիմյանը, Ռազմարդյունաբերության կոմիտեի նախագահ Ալեքսի Բերդյանը:

Յուրի Հովհաննիսյանը շնորհակալություն հայտնեց ՀՀ կառավարությանը և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիային՝ Դմիտրի Մենդելեևի պարբերական աղյուսակի 150-ամյակին նվիրված միջոցառումների կազմա-

կերպման համար: Իր խոսքում նա ընդգծեց Մենդելեևի գիտական բացահայտման հավերժական նշանակությունը համաշխարհային գիտության համար: «Եթե դուք զբաղվում եք այն գիտությամբ, որով զբաղվում էր Դմիտրի Մենդելեևը, ապա փառք ու պատիվ ձեզ: Եթե դուք զբաղվում եք այլ գործերով, ապա իմացեք, որ ամեն մի գործում առկա է Մենդելեևի գիտական ժառանգության մի մասնիկ», - ասաց Յուրի Հովհաննիսյանը:

Ելույթներին հաջորդեցին «Դ. Ի. Մենդելեևի պարբերական աղյուսակի ստեղծման 150-ամյակը», «Ծանր մետաղների և ռադիոնուկլիդների մուտագեն գործունեությունը մեջ», «Կենսամանակային մետաղակոմպլեքսային հակաօքսիդիչներ», «Դ. Ի. Մենդելեևի ներդրումը երկրաբանության, երկրաբանիայի կիրառումը երկրաբանական և հնագիտական խնդիրների լուծման մեջ» թեմաներով գիտական զեկուցումները:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն



## ԹՈՍՄԱՍ ՀԱՐՏՄԱՆԸ ԵՎ «ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ»

Հայ երաժշտության ռահվիրա Կոմիտասի կյանքի ամենաողբերգական ժամանակահատվածում, երբ նա հոգեկան խանգարումով պառկած էր նախ՝ Կ. Պոլսի, ապա՝ Փարիզի հոգեբուժարանում, հայ հասարակայնության լայն շրջաններն իրենց վրա են վերցրել նրա խնամքը՝ հնարավորինս օգնելով նրան նորից կյանքի կոչելու։ Այդ գործում իրենց որոշակի նպաստն են բերել նաև ռուս կոմպոզիտոր Թոմաս Յարտմանն ու Թիֆլիսում հիմնված «Կոմիտասի անվան ընկերությունը»։

Ընկերության ստեղծման ոգեշնչողներից ու նախաձեռնողներից մեկը եղել է ռուս կոմպոզիտոր, երաժշտաբան և դիրիժոր Թոմաս Յարտմանը (1885-1956)։ 1919 թ. փետրվարի սկզբին Թ. Յարտմանը համաճանաչման բերումով գալիս է Թիֆլիս, որտեղ էլ ապրում և գործում է մինչև 1921 թվականը։ Այստեղ ռուս երաժշտագետի գործունեությունը մեծապես կապվում է Թիֆլիսի կոմսերվատորիայի հետ։ Նա միաժամանակ ամենաակտիվ մասնակցությունն է ունենում քաղաքի երաժշտահասարակական կյանքին։ Թիֆլիսի ինքնատիպ կոլորիտով հագեցած մշակութային կյանքը միանգամից գրավում է Թ. Յարտմանին, և նա մտերմական ու ստեղծագործական կապեր է հաստատում նրա ներկայացուցիչներից շատերի հետ։ Առանձնապես մշտել է նրա մտերմությունը հայ մտավորականության հետ։ Ուշագրավ է հատկապես հետևյալ փաստը. 1919-ի փետրվարի 26-ին տեղի է ունենում ռուս բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկու հիմնած Թիֆլիսի «Բանաստեղծների համաքաղաքական» 24-րդ նիստը, որը նվիրված էր հայ մեծ բանաստեղծ Յուզիանին Թոմասյանի ծննդյան 50-ամյակին։ Ինչպես հաղորդում է «Ձակավկազսկոյե սլովո» թերթը, նիստին մասնակցել է նաև Թ. Յարտմանը։ Վերջինս «... մտաբերելով ամեն տոնախմբությունը նոր երգով սկսելու հայկական սովորույթը, հորելյարի պատվին նվագում է հետաքրքրիկ ելույթ»։ Այս հաղորդումից հայտնի է դառնում, որ համաքաղաքական նիստի օրերին Յարտմանը, անշուշտ, արդեն մտերմություն է ունեցել Յուզի. Թոմասյանի հետ և գրուցել հայ ժողովրդական երգարվեստի, մասնավորապես Կոմիտասի մասին։ Բացի այդ հայտնի է, որ ռուս կոմպոզիտորը մտերմություն է ունեցել Կոմիտասի բարեկամների՝ Եղիշե Թադևոսյանի, Սպիրիդոն Մելիքյանի և այլոց հետ։ Դրա արդյունքը լինում է այն, որ շատ շուտով վերոհիշյալ թերթում (փետրվարի 28-ի և մարտի 1-ի համարներում) հրապարակվում է Յարտմանի «Ժողովրդական երգը և այն հավաքողները» շարքի «Կոմիտաս վարդապետ» ծավալուն հոդվածը։ Այն, փաստորեն, Կոմիտասի մասին եղած առաջին խոր ուսումնասիրություններից մեկն է։

Հոդվածի առաջին մասում ռուս կոմպոզիտորը, խոսելով Կոմիտասի հոգեկան անմխիթար վիճակի մասին, այնու-

հետև գրում է. «Թեև Կոմիտասը մեծ հաջողություն ունեցավ Արևմուտքում, բայց նրա անունը գրեթե անհայտ է մեր հասարակության մեծ մասին, նույնիսկ երաժշտության մասնագետներին։ Դժբախտաբար նրա համերգները տեղի չեն ունեցել ոչ Պետերբուրգում, ոչ էլ Մոսկվայում։ Նրա վերջին հավաքածուները լույս են տեսել պատերազմից քիչ առաջ... այդ ժամանակ գեղարվեստական խնդիրները մոռացված էին շատերի կողմից։ Այդ... համաճանաչմանը ինձ մտածել են տալիս, որ մեր զարգացած հասարակության մեջ շատերը կան, որ ծանոթ չեն Կոմիտասի գործունեությանը կամ, գուցե, միայն նրա անունը լսած լինեն»։ Ապա հոդվածագիրը համաճանաչման անդրադառնում է Կոմիտասի կյանքին ու գործունեությանը։

Հոդվածի երկրորդ մասը նվիրված է ամմահ Կոմիտասի ստեղծագործությունների վերլուծությանը, որտեղ Յարտմանը ժամանակակից կոմիտասագիտության մակարդակով քննում է նրա երկերը՝ երևան հանելով դրանց մնայուն գեղագիտական արժեքը, մշուժ երգահանի բարձր ծիրքը և նրա անգնահատելի ներդրումը հայկական երաժշտության պատմության մեջ. «Կոմիտասի առջև դրված էր մի ահագին դժվար խնդիր. նոր երգաշնակային (harmonique) և բազմաձայն (contrepointique) ոճ ստեղծել արևելյան երաժշտության ոգու համաձայն։ Դա ապագայում նոր խոսք պիտի բերեր երաժշտության մեջ։ ... Նա օրինակ չառավ եվրոպական Արևմուտքի կանոններից, այլ պտղաբեր նյութի մեջ գտավ ... իր ոճը։ ... Եթե քննենք Կոմիտասի մշակումների դաշնակուները, կտեսնենք ...զարմանալի ինքնուրույնություն, որ բնականորեն բխում է ժողովրդական երգի էությունից... Կոմիտասի ... ոճը ոչ միայն մշակություն ունի ժողովրդական երգի մշակման գործում, այլև պիտի օրինակ ծառայի արևելյան երաժշտության մշակումների համար։ ...Կոմիտասին այդ ոճի հոգևոր հայրը պետք է համարել»։ Խորապես ուսումնասիրելով հայկական ժողովրդական երգերի կոմիտասյան ոճը՝ Յարտմանը շարունակում է, որ նրա խմբերգերում կան մի շարք ինքնուրույն մեղեդիներ, որոնք հյուսված են ամբողջությամբ, և որ դրանք ոչ միայն գեղեցիկ են, այլև իրենց բնույթով կատարելապես հայ երգի ոգով են ներկայանում, և շատ անգամ դժվար է տարբերել ժողովրդական կոմպոզիտորի արարած եղանակից. «Դա միայն հորինվածք չէ, այլ ոճի ստեղծում։ Ահա դրանում է Կոմիտասի գործի մնայուն մշակությունը ոչ միայն հայ, այլև արևմտաեվրոպական երաժշտության համար։ Նրա խմբերգերը անգերազանցելի և օրինակելի են»։ Իր վերլուծության մեջ Յարտմանն անց է կացնում նաև հետևյալ ուշագրավ գուգահեռը. «...Նշանավոր ռուս տեսաբան Սերգեյ Տանենը անձամբ ինձ ասում էր, թե այն եզրակացության է եկել, որ ռուսական ժողովրդական երգերը պետք է բազմաձայն

մշակել։ Հանճարեղ Կոմիտասը նախագագություն ուժով կիրառեց այդ ոճը զարմանալի կատարելությամբ»։

Հոդվածում վերլուծականից բացի, տեղ են գտել ժամանակակիցների գնահատանքի խոսքերը Կոմիտասի մասին։ Այսպես, Յարտմանը գրում է. «...Հիշում եմ Չերեպանին (ռուս անվանի կոմպոզիտոր, Թիֆլիսի կոմսերվատորիայի տնօրեն -Ա. Ջ.) հիացմունքը՝ Կոմիտասի երգերը զննելիս, նա բացականչեց. «Ինչպե՞ս պիտի ուրախանար Մորիս Ռավելը լսելով այս», ապա շարունակելով՝ հոդվածագիրն ասում է. «...Ֆրանսիական երաժշտական աշխարհի ամենամեծ ներկայացուցիչների վերաբերմունքը դեպի Կոմիտասը՝ անգնահատելի է. «խոշոր ե-

լի հաղորդումներից տեղեկանում ենք, որ համերգի հաջողությունն անչափ մեծ է եղել։ Դրա վկայությունն է նաև այն, որ ընկերության երաժշտական երեկոները, Թ. Յարտմանի ներածական գրավիչ խոսքով, այնուհետև հասարակության պահանջով կրկնվել են։

Ընկերությունը համերգներ է կազմակերպել նաև Երևանում, Բաթումում։ Այսպես, 1919 թ. հունիսի կեսերին «Կոմիտասի անվան ընկերությունը» գալիս է Երևան՝ երաժշտական երեկոներ կազմակերպելու «վաստակավոր երաժշտապետ Կոմիտաս վարդապետին» նյութապես օգնելու նպատակով։ Մի փոքր ավելի ուշ՝ հուլիսի սկզբին, Երևան է գալիս Յարտմանը՝ իր երգչուհի կնոջ հետ, համերգներ

երաժշտական ազգագրագետ», «իսկական հայ երգը առաջին անգամ Արևմուտքին ներկայացնող վարպետ», «հայկական ժողովրդական երգերի փայլուն մշակող, սակայն նախ և առաջ՝ մեծ երգահան», սրանք 1914 թվականին Փարիզում կայացած համաշխարհային երաժշտության համագումարում Կոմիտասի երգերն ունկնդրելուց հետո Կլոդ Դեբյուսիի, Ռոմեն Ռուլանի, Լուի Լալուանի կարծիքներն են նրա մասին»։

Թ. Յարտմանի այս խորունկ ու արժեքավոր հոդվածի տպագրության օրերից ծայր են առնում Թիֆլիսի հայ մտավորականության լայն շրջանների ջանքերը՝ հանուն հիվանդ կոմպոզիտորի խնամակալության և նրա ստեղծագործական ժառանգության հրապարակման ու պահպանման։ Եվ ահա?, 1919-ի մայիսի սկզբին Թիֆլիսում հիմնվում է «Կոմիտասի անվան ընկերությունը», որի նպատակն էր օժանդակել Փարիզում բուժվող մեծ կոմպոզիտորի հոգածությանը, նրա տպագրված ու անտիպ ստեղծագործությունների պահպանությանն ու տարածմանը։ Ընկերության կազմում ընդգրկված են եղել Թիֆլիսի հայ և օտարազգի անվանի կոմպոզիտորներ, կատարողներ, գրողներ, նկարիչներ։ Շատ շուտով, մայիսի 21-ին, Արտիստական ընկերության ծառայում տեղի է ունենում Կոմիտասին նվիրված երեկո-համերգ, որով սկսվում է նրա երկերի պրոպագանդումը և դրամական նպաստի համագնակությունը։ Այդ օրը լեւի-լեցուն թատրոնում ներածական խոսքով հանդես են գալիս գրականագետ Մ. Մատենձյանը և Թ. Յարտմանը։ Նրանցից առաջինը խոսել է Կոմիտասի կյանքի, իսկ երկրորդը՝ երաժշտական տաղանդի, նրա երկերի մշակության մասին։ Իր խոսքում, շեշտելով հայ կոմպոզիտորի բարձր ծիրքը, Յարտմանը մասնավորապես պարզաբանել է. «Լսելով Կոմիտասի մշակած հայոց երգերը, դուք լսում եք բուն հայկական ժողովրդական երգեր, գործ եք ունենում իսկական ժողովրդական ստեղծագործության հետ և կարող եք համոզված լինել, որ Կոմիտասը թույլ չի տա իրեն՝ փոխել որևէ հնչյուն, որևէ ներդաշնակություն։ ... Կոմիտասի մշակումը հավաստում է, որ, իրոք, դժվար է պատկերացնել, թե այս կամ այն երգը կարելի է դաշնակել այլ կերպ։

Նույնը և խմբերգերում, որտեղ Կոմիտասն ունի ... ոչ թե պատահական, այլ գիտակցված ու մտածված հնարքների անսպառ պաշար»։

Ներածական խոսքերին հաջորդում է համերգ՝ Կոմիտասի ստեղծագործություններից, երգիչներ Վահան Տեր-Առաքելյանի, Արմենակ Տեր-Աբրահամյանի, Մելիք-Բեգլարովի և այլոց կատարմամբ։ Ելույթ է ունենում նաև Սպիրիդոն Մելիքյանի ղեկավարած երգչախումբը։ Մեծ խանդավառությամբ են ընդունվում «Անտունի», «Այ սարեր», «Գնա, գնա» «Քելեր, ցուլեր», «Հով արեք», «Երի, երի», «Հաբրբան» և այլ կատարումներ։ Մամու-

լի։ Նախատեսված է եղել երկու համերգ, մեկը՝ եվրոպական երաժշտության, մյուսը՝ Կոմիտասի ստեղծագործություններից։ Մամուլի հաղորդումներից հայտնի է դառնում, որ Կոմիտասին նվիրված երեկո-համերգի սկզբում ռուս երաժշտագետն անդրադարձել է հայ կոմպոզիտորի կենսագրությանն ու ստեղծագործությանը և պարզաբանել մեծ երախտավորի երկերի ոչ միայն ազգային, այլև համաշխարհային մշակությունն ու արժեքը։ Ուշագրավ է, որ այդ համերգում Կոմիտասի երգերի հայերեն ինքնատիպ կատարումով հանդես է եկել Յարտմանի կինը։

Կոմիտասի մտերիմներից Եղիշե Թադևոսյանը, որն ընկերության ջերմեռանդ անդամներից է եղել, Փարիզ՝ Արշակ Չոպանյանին ուղղած մի նամակում գրել է. «Կցանկանալի ձեր կարծիքը Կոմիտասի առողջության մասին լսել, գիտեմ, որ այդտեղ հոգում եք, մենք էլ այստեղ նրա անունով հիմնեցինք մի ընկերություն, բայց դրամի կուրսը անչափ ընկած է... մեր նպաստը շատ անմշակ բան է դուրս գալիս մեծ ճիգ թափելուց հետո։ Աստված նորան կատարյալ առողջություն տա»։

«Կոմիտասի անվան ընկերության» մասին Գարեգին Լևոնյանն իր հուշերում գրում է. «Մեր սիրելի երաժշտագետի (Կոմիտասի - Ա. Ջ.) դրությունն արդեն ամհուսալի դարձավ հոգեպես կազդուրվելու, բայց նրա առողջ ֆիզիկականը պահանջ ուներ սննդի ու խնամքի։ Փարիզի հայ շրջաններին այդ գործում աջակցելու համար 1920 թ. (1919 թ. մայիսի սկզբին - Ա. Ջ.) Թիֆլիսում կազմակերպվեց «Կոմիտաս» ընկերությունը, սեղծ ծրագրով, նպատակ ունենալով անդամավորների հավաքումով տարեկան մի որոշ գումար ուղարկել այնտեղ։ Ընկերության նախագահն էր, թե վարչության անդամներից մեկը, նկարիչ Եղիշե Թադևոսյանը, Կոմիտասի վաղեմի բարեկամը... Ի՞նչ արեց գործնականում այդ ընկերությունը կամ ե՞րբ դադարեց նրա գոյությունը՝ ինձ հայտնի չէ, Թիֆլիսից Հայաստան տեղափոխվելով, այլևս չեն կարողացել հետևել այդ գործին»։

«Կոմիտասի անվան ընկերության» հետագա գործունեության մասին այլ տվյալներ չունենք։ Հաստատ կարելի է ասել, որ հիմնվելով 1919 թ. մայիսի սկզբին՝ այն գոյատևել է, ինչպես գրում է Գ. Լևոնյանը, նաև 1920-ին։

Հարկ է ավելացնել, որ Կոմիտասի աշակերտուհի Մարգարիտ Բաբայանը տարիներ անց հայերեն է թարգմանել Թ. Յարտմանի վերոհիշյալ հոդվածը և ընկերության առաջին երեկո-համերգի ներածական խոսքն ու տպագրել Ա. Չոպանյանի խմբագրությամբ Փարիզում հրատարակվող «Ամսափո» հանդեսի 1935 ու 1936 թթ. համարներում։

**Անուշավան ԶԱԲԱՐՅԱՆ**  
**«Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիր, բանասիրական գիտությունների դոկտոր**



## ԸՇ ԳԱԱ-ում գումարվեց «Կոմպյուտերային գիտություն և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ» CSIT-2019 12-րդ միջազգային գիտաժողովը

Սույն թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ ԳԱԱ-ում իր աշխատանքներն սկսեց «Կոմպյուտերային գիտություն և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ» CSIT-2019 միջազգային 12-րդ գիտաժողովը:

«Գիտաժողովի նպատակն է խրախուսել կոմպյուտերային գիտության և ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառում գիտական և տեխնոլոգիական տեղեկատվության փոխանակումը: Այն հնարավորություն կտա հայ և արտասահմանցի գիտնականներին ներկայացնելու և քննարկելու իրենց գիտական գաղափարները, հետազոտությունների արդյունքները և զարգացման հեռանկարները»,- բացելով գիտաժողովն ասաց ՀՀ ԳԱԱ փոխնախագահ ակադեմիկոս Յուրի Շուքուրյանը: Նա,

ԿԿՍՍ նախարարության գիտության կոմիտեն և Հայաստանի գիտակրթական համակարգչային ASNET-AM ցանցը:

CSIT-2019 12-րդ միջազգային գիտաժողովի կարևոր միջոցառումները կայացան:

■ **23 սեպտեմբերի, ժ. 12:00**, կլոր սեղան՝ «Հայաստանում բարձր արտադրողականության հաշվողական համայնքի ծնավորումը» թեմայով, որի ընթացքում քննարկվեցին Հայաստանի ազգային գերհամակարգչային կենտրոնի տեսլականը:

■ **24 սեպտեմբերի, ժ.20:00**, ՀՀ ԳԱԱ նախագահության սրահում առաջին անգամ տեղի ունեցավ «Հովեր» պետական կամերային երգչախմբի և Իտալիայի Վենե-

## Շովիանենս Թումանյան ~150



ԸՇ ԳԱԱ-ում մեկնարկեց Ամենայն հայոց բանաստեղծ Շովիանենս Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված գիտական նստաշրջանը

Սույն թվականի հոկտեմբերի 21-ին՝ ժամը 10:00-ին, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) նախագահության նիստերի դահլիճում (Մարշալ Բաղրամյան պողոտա 24, 2-րդ հարկ), կմեկնարկի ամենայն հայոց բանաստեղծ Շովիանենս Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված գիտական նստաշրջանը:

Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի փոխնախարար Նարինե Թովիսիյանը և Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը:

Գիտական նստաշրջանը կշարունակի աշխատանքը մինչև հոկտեմբերի 25-ը:

Հոկտեմբերի 22-ին նստաշրջանը տեղի կունենա Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, հոկտեմբերի 23-25-ին՝ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում: Նստաշրջանի ընթացքում Թումանյանի կյանքի, գործունեության և ստեղծագործությունների վերաբերյալ կներկայացվի 71 զեկուցում:

Հովիանենս Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված գիտական նստաշրջանի կազմակերպիչներն են ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը և Երևանի պետական համալսարանը:

**Հանգամանորեն՝ հաջորդ համարում:**



շնորհակալություն հայտնելով CSIT-2019-ի կազմակերպիչներին և մասնակիցներին, ներկայացրեց գիտաժողովի շրջանակներում նախատեսվող միջոցառումները:

Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը կարևորեց գիտաժողովի շրջանակներում քննարկվելիք թեմաները և առաջարկվող լուծումները արհեստական բանականության, փակ համակարգերի մոդելավորման, ինչպես նաև կիրառական մաթեմատիկայի տարբեր ուղղությունների և դրանց կիրառելիության վերաբերյալ և մադրեց արդյունավետ աշխատանքային օրեր:

Գիտաժողովին մասնակցում էր 10 երկրներից ավելի քան 80 գիտնական և ճարտարագետ:

Գիտաժողովի կազմակերպիչներն էին ՀՀ ԳԱԱ-ն և ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պորբեմների ինստիտուտը: Գիտաժողովի տեխնիկական հովանավորողներն են Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը, IEEE Կոմպյուտերային ասոցացիան, ՀՀ

տիկի Սուրբ Մարկոսի «Cappella Marciana» երգչախմբի համաժամ առջանց համերգը՝ ցածր հապաղման տեսաձայնային համակարգի (LOLA -LOW LAgency audio visual streaming system) միջոցով:

■ **25 սեպտեմբերի, ժ. 09:30**, Մատենադարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Արևելյան գործընկերության 4-րդ «Է-Ենթակառուցվածքներ» EaPEC 2019 գիտաժողովի բացումը «Կապը մշակույթի հետ» կարգախոսով:

■ Գիտաժողովի նպատակն է որպես հարթակ ծառայել աշակցելու Արևելյան գործընկերության տարածաշրջանի և ԵՄ անդամ պետությունների միջև էլեկտրոնային ենթակառուցվածքների համայնքային կայացմանը: Երկօրյա գիտաժողովում քննարկվեցին Եվրոպայում բաց գիտության համար էլեկտրոնային ենթակառուցվածքների օգտագործման խնդիրները:

**ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն**

## ԸՇ ԳԱԱ-ում կայացավ «Բուսաբանական այգիներում և դենդրոպարկերում լանդշաֆտային ճարտարապետություն» 11-րդ միջազգային գիտաժողովը

Սույն թվականի հոկտեմբերի 1-ին ՀՀ ԳԱԱ-ում մեկնարկեց «Բուսաբանական այգիներում և դենդրոպարկերում լանդշաֆտային ճարտարապետություն» 11-րդ միջազգային գիտաժողովը: Գիտաժողովին մասնակցում էին 120-ից ավելի գիտնականներ Ռուսաստանի Դաշնությունից, Բելառուսից, Ուկրաինայից, Հարավային Կորեայից, Մոլդովայից, Ղազախստանից, Լիտվայից:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-բարոնուդար Ռուբեն Հարությունյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ժիրայր Վարդանյանը, ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի տնօրեն Անահիտ Դուկասյանը, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի գլխավոր բուսաբանական այգու փոխտնօրեն Էլենա Գոլոսովան, Ուկրաինայի գիտությունների ազգային ակադեմիայի բուսաբանական այգու տնօրեն Նատալիա Զախնենկոն, Իրկուտսկի պետական համալսարանի բուսաբանական այգու տնօրեն Վիկտոր Կուզևանովը:

Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին մինչև հոկտեմբերի 4-ը:

Գիտաժողովի ընթացքում տեղի ունեցավ 6 պլենար նիստ, որոնց շրջանակներում մասնակիցները ներկայացրեցին գիտական զեկուցումներ՝ նվիրված լանդշաֆտային ճարտարապետության հիմնախնդիրներին, բուսաբանական այգիների և դենդրոպարկերի դերին լանդշաֆտային ճարտարապետության զարգացման գործում, բուսաբանական այգիներում բնական լանդշաֆտներին և



դենդրոտեսպագիցիաներին, ինչպես նաև բուսաբանական այգիների կրթական գործառնություններ:

Գիտաժողովի մասնակիցները այցելեցին Ստեփանավանի «Սոճուտ» և Իջևանի դենդրոպարկեր, Սևանի և Վանաձորի բուսաբանական այգիներ:

Գիտաժողովի կազմակերպիչներն էին գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիային կից ԱՊՀ բուսաբանական այգիների խորհուրդը, Ռուսաստան-

նի գիտությունների ակադեմիայի գլխավոր բուսաբանական այգին, ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտը՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և WWF-Հայաստանի աջակցությամբ:

**ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն**



# ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ՀԵՌՈՒ, ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Ավստրիացի հայագետ, Ջալցբուրգի համալսարանի Քրիստոմյա Արևելքի հետազոտությունների կենտրոնի տնօրեն, դոկտոր-պրոֆեսոր Յասմին Դու-Թրագուտը 1988 թ.-ից զբաղվում է հայագիտությամբ: 2015-ից սկսել է ուսումնասիրել Առաջին աշխարհամարտի տարիներին ռուսական բանակի հայագրի զինվորականների պատմությունները:

Օգոստոսի 31-ին Հայոց ցեղասպանության թանգարանի ժամանակավոր ցուցադրությունների սրահում տեղի ունեցավ նրա հեղինակած «Հայրենիքից հեռու, հայրենիքում. հայ ռազմիկների ճակատագիրը Առաջին աշխարհամարտում» եռալեզու (հայերեն, անգլերեն, գերմաներեն) ժամանակավոր ցուցադրության բացումը և համանուն պատկերազրքի շնորհանդեսը: Բացման խոսքով հանդես եկան «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի տնօրեն, պ.գ.դ. **Հարություն Մարությանը**, Յասմին Դու-Թրագուտը և Ավստրիայի դեսպանության ներկայացուցիչ **Ալֆրեդ Բրատրանկը** (նստավայրը՝ Վիեննա):

Իր խոսքում Հարություն Մարությանը ընդգծեց, որ այս անգամ ընտրել են պատերազմի ահավորության այլ ցուցիչ՝ ռազմագերիները: Ըստ նրա՝ ամբողջ ցուցադրությունը օսմանյան և ավստրո-հունգարական քաղաքականությունների տարբերության վկայությունն է, ցույց է տալիս այն քաղաքականությունը, որը ոչնչացրեց



հայ ժողովրդին. Օսմանյան կայսրությունը սպանեց իր հայ հպատակներին, մինչդեռ Ավստրո-Հունգարիայի ծամբարներում հայ ռազմագերիներն ապրում էին մարդավայել կյանքով. այստեղ մոտեցումն այլ էր: Հարություն Մարությանի խոսքով՝ կարևորը մեզ և Յասմինի համար գերիների սոցիալական կյանքն է: Բանախոսը համառոտ ներկայացրեց Յասմին Դու-Թրագուտի կատարած աշխատանքը:

Վերջինս, սկսելով ելույթը, շնորհակալություն հայտնեց իր հայ և ավստրիացի բարեկամներին, ՀՀ-ում օտար պետությունների ներկայացուցիչներին՝ միջոցառմանը ներկա լինելու համար, անդրադարձավ ռուսամասիրությունները կատարելու շարժառիթներին և ընթացքին: Ելույթի վերջում իր շնորհակալությունը հայտնեց

նաև նրանց, ովքեր աջակցել են իրեն Հայաստանում հետազոտություններ կատարելու, ինչպես նաև Հարություն Մարությանին և ցուցադրության մյուս կազմակերպիչներին, այն մարդկանց և հաստատություններին, ովքեր ֆինանսապես աջակցել են իր հետազոտությունների կատարմանը (Ավստրիայի արտաքին գործերի նախարարություն, «Ցուկունֆուտս-ֆոնդ» ավստրիական գիտական կազմակերպություն, «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկություն), ռազմագերիների ընտանիքներին:

Ցուցադրությունը բաղկացած էր երկու հիմնական խորագրից՝ «Ավստրո-Հունգարիայի հայ ռազմագերիների հետքերով» և «Հայրենիքից հեռու. անվերադարձ», ինչպես նաև 10 օժանդակ խորագրերից՝ «Առաջին աշխարհամարտ. պատճառներ և հետևանքներ», «Միլիոնավոր մարդիկ՝ թշնամու ձեռքերում», «Ռազմագերիների ճամբարներն Ավստրո-Հունգարիայում. զորանոցային քաղաքներ», «Աշխատանք և զբաղվածություն», «Հիվանդություն և մահ», «Ազատություն և վերադարձ հայրենիք», «Ռուդոլֆ Փոլսը և մարդաբանական հետազոտությունները», «Մարդաբանական ուսումնասիրությունների իրականացումը», «Հնչյունագրություն», «Ռուդոլֆ Փոլսը և հայերը»:

Ցուցադրությունը հազեցված էր արխիվային եզակի լուսանկարներով, տեսաֆիլմերով, ցուցանմուշներով, որոնց

միջոցով և ուղեկցվող բացատրական տեքստերով փորձ էր արվում վեր հանել զինվորների ոչ սովորական կյանքի ուղին: Ցուցադրության կարևոր մաս էին կազմում հայ ռազմագերիների հարյուրամյա վաղեմություն ունեցող երգն ու արտասանությունը: Այցելուները հնարավորություն ունեցան ականջակալներով ունկնդրելու ներկայացվող ձայնագրությունները:

Ցուցադրության մեջ բացառիկ էին հատկապես ռազմագերիների ձեռքով պատրաստված իրերը՝ գերության ընթացքում, ժամանակաշրջանը պատկերող քարտեզները, բացիկները, ռուսական բանակի տարբեր զորատեսակների անագե զինվորիկները, ռազմագերիների ինքնության քարտերը, սահմանափակ տարածքում տեղաշարժվելու արտոնագրերը, ճամբարի դրամական միավորները, ճամբարային թերթերը և այլն:

Սույն ցուցադրության մեջ և համանուն պատկերազրքում օգտագործված նյութերի զգալի մասը ձեռք է բերվել Ավստրիայի, Հայաստանի և Ռուսաստանի արխիվներից:

Հետազոտական թիմին հաջողվել է Հայաստանի գյուղերում գտնել նախկին ռազմագերիների բարեկամների հետքերը, նրանց անմիջական ժառանգներին: Վերջիններիս հիշողությունները, նրանց տրամադրած ընտանեկան լուսանկարները, տարբեր արխիվային փաստաթղթերը թույլ են տվել ամբողջացնել ու շարադրել հայ ռազմագերիների կյանքի պատմությունը: Ռազմագերիների ժառանգներից շատերը գիտեին իրենց բարեկամների՝ գերության մեջ եղած լինելու մասին, ուստի համար էլ դա նորություն էր:

Ցուցադրության բացմանը ներկա էին հայ ռազմագերիների ժառանգներ, հյուրեր՝ ինչպես Հայաստանից, այնպես էլ Ավստրիայից (պետական պաշտոնյաներ, դիվանագետներ, գիտնականներ, լրագրողներ և այլ հրավիրյալներ):

**Հրաչյա ԲԱՆՈՅԱՆ**  
«Ազգ»

## ԼԵԶՎԱՔԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԴԵՍԻ 20-ՐԴ ԵԱՄԱՐԸ

Հայ լեզվաբանությունը դարերի պատմություն ունի, բայց չնայած դրան, տևական ժամանակ մեր իրականության մեջ լեզվաբանությանը նվիրված գիտական պարբերական չի եղել: 2003 թ. ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կողմից հիմնադրվեց «**Լեզու և լեզվաբանություն**» գիտական հանդեսը՝ առաջին լեզվաբանական պարբերականը հայ իրականության մեջ՝ իր գործի նվիրյալ, վաստակաշատ լեզվաբան, ուսյն ինստիտուտի գիտաշխատող, բ.գ.դ.պրոֆ. **Վազգեն Համբարձումյանի** նախաձեռնությամբ, որը մինչև օրս հանդեսի գլխավոր խմբագիրն է:

«Լեզու և լեզվաբանություն»-ը բացվում է Գևորգ Ջահուկյանի լավագույն հոդվածներից մեկով, որն արդի հայերենագիտության համար ունի շրջադարձային նշանակություն. այն լույս էր տեսել անգլերեն, այնուհետև թարգմանվել հայերեն՝ հանդեսի համար:

Հանդեսն ունի ավանդական կառուցվածք՝ «Հոդվածներ», «Բանավեճ և քննարկում», «Հաղորդումներ», «Գրախոսություններ», «Գիտական կյանք» և այլն: Այստեղ լուսաբանվում, արծարծվում են լեզվի՝ իբրև առարկայի, լեզվաբանության՝ իբրև տեսության հարցերը, գրախոսական հոդվածներով անդրադարձ է արվում նոր հրապարակվող լեզվաբանական աշխատություններին, լուսաբանվում է ոլորտի գիտական կյանքը: Յուրաքանչյուր հոդված կարող է հրապարակվել հեղինակի նախընտրած լեզվով (անգլերեն, հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և



այլն): Տպագրվում են բացառապես գիտության թեկնածուների և դոկտորների հեղինակած նյութերը: Խմբագրական խորհուրդը ներառում է ոլորտի առաջատար հայ և օտարազգի մասնագետների՝ ինչպես Հայաստանից, այնպես էլ արտերկրից. տպագրվելիք նյութերի ընտրությունը կատարվում է գիտական պատշաճ մակարդակ ապահովելու պահանջով:

Պարբերականն ունի միջազգային հանդեսի կարգավիճակ՝ կարելի է ասել, իր գրեթե բոլոր չափորոշիչներով: Վ. Համբարձումյանի, խմբագրականի և աշխատակիցների անձամբ, բարեխիղճ ու բոլորանկար աշխատանքի և բարձր պատասխանատվության շնորհիվ հանդեսը մեծ հեղինակություն է վայելում գիտական համրության մեջ, ունի բարձր վարկանիշ, լավագույններից մեկն է Հայաստանում:

Պարբերականը լույս է տեսնում տարին երկու անգամ, տարածվում է մեր երկրի գիտական, ուսումնական հաստա-

տություններում, ընդգրկված է ԳԱԱ լեզվի ինստիտուտի էլեկտրոնային կայքում:

Սեպտեմբերի 20-ին Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ հանդեսի 20-րդ հոբելյանական համարի շնորհանդեսը: Բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն, բ.գ. դ. **Վիկտոր Կատվայանը**: Վերջինս, շնորհավորելով պարբերականի խմբագրականին՝ նրան մաղթեց նորանոր ձեռքբերումներ, գիտության աշխարհում հանդեսի շարունակական առկայություն և անընդհատ վերելք: Տնօրենն ընդգծեց, որ նմանատիպ հանդես ունենալու գաղափարը Վ. Համբարձումյանին է, ընթերցեց ՀՀ ԳԱԱ նախագահ **Ռադիկ Մարտիրոսյանի** խոսքը՝ գիտական պարբերականի մասին: Վ. Համբարձումյանը ներկայացրեց հանդեսի ստեղծման պատմությունը, նշեց, որ «մինչ օրս հանդեսն ունեցել է շուրջ 120 մամուլ ծավալով հրապարակում, որը, ինչ խոսք, յուրօրինակ ձեռքբերում է արդի հայագիտութ-

յան, ամենից առաջ մեր երկրում առհասարակ լեզվաբանության զարգացման ճանապարհին»: Ելույթներ ունեցան նաև «Տաթև» գիտակրթական համալիրի լեզվաբանության բաժանմունքի ղեկավար **Հովհաննես Ջաքարյանը**, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրության ֆակուլտետի ղեկան **Աշոտ Գալստյանը**, Երևանի պետական համալսարանի ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ **Վարդան Պետրոսյանը**, մանկավարժական համալսարանի հայ մոր և մորազույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրեն **Սուրեն Դանիելյանը**, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի համալսարանի լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչ **Կարինե Աբրահամյանը**, Գավառի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի ղեկան **Թաթուլ Ասոյանը**, Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ներկայացուցիչ **Մհեր Քումունցը**, ԳԱԱ լեզվի ինստիտուտի գիտաշխատողներ **Գայանե Մխիթարյանը**, **Լիանա Հովսեփյանը**, **Նելսոն Սիմոնյանը** (գլխավոր խմբագրի տեղակալ), **Ռոբերտ Թովմախյանը**: Միջոցառման վերջում ամփոփիչ ելույթով հանդես եկավ Վ. Կատվայանը, նա խոսեց լեզվի ինստիտուտի գիտական գործունեության հեռանկարների մասին:

Երկար կյանք լեզվաբանական հանդեսին, արդյունաբեր ընթացք նրա գլխավոր խմբագրին, խմբագրական խորհրդին և հանդեսին աշխատակցող լեզվաբաններին:

## Արմեն Կառլենի ՍԱՂԱԹԵԼՅԱՆ



Խորը վշտով տեղեկացնում ենք, որ 2019 թ. հոկտեմբերի 8-ին 66 տարեկանում կյանքից հեռացավ ՀՀ ԳԱԱ Էկոլոգաճանաչման հետազոտությունների կենտրոնի հիմնադիր տնօրեն, անվանի գիտնական, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Կառլենի Սաղաթելյանը:

Արմեն Սաղաթելյանը ծնվել է 1953 թ. օգոստոսի 2-ին Երևանում: 1975 թ.-ին ավարտելով Երևանի պետական համալսարանի երկրաբանության ֆակուլտետը՝ շուրջ 15 տարի աշխատել է երկրաբանահետախուզական ոլորտի տարբեր կազմակերպություններում՝ անցնելով երկար ուղի՝ ինժեներից մինչև երկրաբանական ջոկատի ղեկավար:

1987թ.-ին, արտադրությունից չկտրվելով, պաշտպանել է թեկնածուական, իսկ 2000թ.-ին՝ դոկտորական ատենախոսությունը ՌԴ հազվագյուտ տարրերի հանքաբանության, երկրաքիմիայի և բյուրեղաքիմիայի ինստիտուտում (Մոսկվա): 2015թ.-ին Արմեն Սաղաթելյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1989թ.-ին ընդունվել է ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ՝ որպես առաջատար գիտաշխատող, այնուհետև՝ տեխնոերկրաքիմիայի լաբորատորիայի ղեկավար:

1993թ.-ին հիմնադրել է ՀՀ ԳԱԱ Էկոլոգաճանաչման հետազոտությունների կենտրոնը, որն իր գործունեության տարիների ընթացքում դարձել է ազգային և միջազգային նշանակության գիտական օջախ, որտեղ Ա.Սաղաթելյանի անմիջական ղեկավարությամբ ստեղծվել է ազգային գիտական դպրոց շրջակա միջավայրի հետազոտությունների բնագավառում:

Իր գիտական գործունեության ընթացքում Ա. Սաղաթելյանը ղեկավարել է ազգային և միջազգային բազմաթիվ գիտական թեմաներ, ծրագրեր և նախագծեր (UNESCO, OSCE, NATO, USAID և այլն):

Չուգահեռ հիմնական աշխատանքին Ա.Սաղաթելյանը հանդիսացել է ՀՀ Գերագույն խորհրդի «Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության հիմնահարցերով» մշտական հանձնաժողովի փորձագետ (1991-1994թթ.), ՄԱԿ-ի ազգային փորձագետ (1996թ.), ՀՀ ԿԳՆ «Երկրի մասին գիտություններ» փորձագիտական հանձնաժողովի գիտական քարտուղար (1997-2008թթ.), Եվրամիության INTAS, ապա FP-7 ծրագրերի «Երկրի մասին գիտություններ» միջազգային նախագծերի գնահատման փորձագետ (1998-2010թթ.), Կովկասի տարածաշրջանային էկոլոգիական կենտրոնի (ք. Թբիլիսի) տնօրենների խորհրդի անդամ (2001-2002թթ., 2005-2006թթ.), գիտության կոմիտեի փորձագիտական հանձնաժողովի «Երկրի մասին գիտություններ» սեկցիայի նա-

խագահ և ՀՀ Վարչապետին առընթեր «Կայուն զարգացման խորհրդի» անդամ էր: 2000թ.-ից Ա. Սաղաթելյանը UNESCO-ի Հայաստանյան հանձնաժողովի «Մարդ և կենսոլորտ (MAB)» Ազգային կոմիտեի նախագահն էր:

Ա.Սաղաթելյանը դասավանդել է Երևանի պետական համալսարանում, Մոսկվայի Ժամանակակից հումանիտար համալսարանի Երևանյան մասնաճյուղում, 2011թ.-ից ԳԱԱ միջազգային գիտական կենտրոնի «Շրջակա միջավայրի պահպանություն և բնօգտագործում» ամբիոնի վարիչն էր:

Ա.Սաղաթելյանը Էկոլոգիայի ու Կենսագործունեության անվտանգության գիտությունների միջազգային ակադեմիայի և ՌԴ Բնական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ էր, անդամակցում է գիտությունների ակադեմիայի «Աշխարհագրության հիմնարար խնդիրներ» միացյալ գիտական խորհրդին, «Երկրի մասին գիտությունների» Եվրոպական միությանը, Միջազգային երկրաբանական միության «Բժշկական երկրաբանություն» ասոցիացիային, Ամերիկյան քիմիական ընկերությանը և մի շարք այլ մասնագիտական կազմակերպություններին:

Ա.Սաղաթելյանը Էկոլոգներով հանդես է եկել 60-ից ավելի միջազգային գիտաժողովներում, ավելի քան 180 գիտական հրատարակումների հեղինակ և համահեղինակ է, այդ թվում՝ 4 մենագրության, 6 ուսումնական ձեռնարկների: Գիտական աշխատությունների և գիտաժողովների նյութերի շուրջ 10 ժողովածուների, ինչպես նաև հայերեն լեզվով «Էկոլոգիական բացատրական բառարանի» երկու հրապարակումների գլխավոր խմբագիրն էր:

Ա.Սաղաթելյանը պարգևատրվել է Միջազգային ակադեմիական ռեյտինգի «Պատիվ, փառք, աշխատանք» IV աստիճանի Գեորգիևյան մեդալով (Ուկրաինա, 2004թ.), Քենթրիջի (Մեծ Բրիտանիա) Միջազգային Կենսագրական կենտրոնի «Աշխարհի առաջատար գիտնական -2009» մրցանակով, «Անանիա Շիրակացի» ՀՀ պետական մեդալով (2013թ.):

Արմեն Սաղաթելյանն ուրույն անհատականություն էր իր ողջ կերտվածքով, մտածողությամբ, բնավորությամբ, համարձակ քայլեր ձեռնարկելիս: Նա նախաձեռնող էր ամեն ինչում. թե՛ կյանքի անսպասելի շրջապատում, թե՛ գիտական այս կամ այն բարդ հարցը մանրամասնորեն քննարկելիս և համապատասխան եզրահանգում անելիս: Նա իր բնագավառի հիմնալի մասնագետ էր, ընկեր և ղեկավար:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը, բնական գիտությունների բաժանմունքը և էկոլոգաճանաչման հետազոտությունների կենտրոնի ողջ անձնակազմը խորապես ցավում են Արմեն Կառլենի Սաղաթելյանի վաղաժամ մահվան կապակցությամբ և խորին ցավակցություն են հայտնում նրա ընտանիքին և հարազատներին:

ՀՀ ԳԱԱ նախագահություն  
ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների  
բաժանմունք  
Էկոլոգաճանաչման  
հետազոտությունների կենտրոնի  
անձնակազմ

ԻՆՔՆԱՆԸՆԿԱԿ  
հիվանդություններ և սնունդ

Ինքնաանընկալ՝ առտոհիմուն հիվանդություններ են 6 կոլագենոզները, պարբերական հիվանդությունը, բազմաթիվ ու բազմաձև ինքնաանընկալ վիճակներ, բազմաթիվ հիվանդություններ, որոնց առաջացման, ձևավորման ու ծանրության մեջ իր չափաբաժինն ունի ինքնաանընկալ վիճակի առկայությունը:

Օրգանիզմի սեփական ծերացած՝ ֆիզիկապես մաշված բջիջները քայքայվում - մարսվում են օրգանիզմի շարակցական հյուսվածքի բաժին հանդիսացող ռետիկուլոէնդոթելիային համակարգի բջիջների՝ մակրոֆագերի կողմից: Նորմայում մակրոֆագը լուծելով մարսվող բջիջը, մասնավորապես դրա սպիտակուցները, պարտավոր է դրանք հիդրոլիզել մինչև հատ-հատ ամինաթթուներ:

Որպեսզի մակրոֆագը կարողանա անթերի, ամբողջապես մարսի-լուծի մարսվող բջիջն, պետք է ունենա անհրաժեշտ ֆերմենտների ողջ տեսականին և յուրաքանչյուր տեսակի ֆերմենտից անհրաժեշտ քանակ:

Մարդու ընդունած-կերած սննդի սննդային սպիտակուցների և քանակական, և՛ որակական անբավարարությունը՝ պակասը, կամ քանակական գերսնուցումը՝ օրական թերսնուցման պայմաններում օրգանիզմին բերում է մի վիճակի, որտեղ գործող մակրոֆագերը չունեն իրենց հասանելիք ֆերմենտների քանակական և տեսակային ողջ չափաբաժինը: Սա բերում է մարսվող բջիջ սպիտակուցների թերհիդրոլիզի, որի հետևանքով առաջանում են ոչ միայն ամինաթթուներ

ներին օրգանիզմի իմունիտետը գնահատում է որպես օտար՝ հակաժին և դրանց դեմ՝ պեպտիդները հիդրոլիզելու համար արտադրում է հակամարմիններ: Արտադրված հակամարմինները քայքայում են ոչ միայն պեպտիդները, այլ նաև օրգանիզմի դեռևս պիտանի սպիտակուցների՝ պեպտիդներին համարժեք տեղամասերն, առաջացնելով ինքնաանընկալ վիճակ:

Մյուս կողմից օրգանիզմի Դ-իմուն-կիլեր բջիջները հայտնաբերելով «օտար» պեպտիդներով մակրոֆագ կարող են անձամբ մտնել պայքարի մեջ մակրոֆագի հետ: Այս պայքարից կարող են զոհվել՝ քայքայվել թե՛ մակրոֆագը, թե՛ Դ-բջիջը, կամ 2-ն էլ: Այդ դեպքում շարակցական հյուսվածքի միջբջջային նյութի մեջ տարածվելով, այդ բջիջների դեռևս ֆերմենտատիվ ակտիվությունը չկորցրած լիզոսոմար ֆերմենտները սկսում են քայքայել շարակցական հյուսվածքի կոլագենը, էլաստինը, ռետիկուլյար թելերը, պրոտեոգլիկանները՝ առաջացնելով շարակցական հյուսվածքի ինքնաքայքայում, ֆիբրոզ, սկլերոզ, որը կլինիկորեն դրսևորվում է ինքնաանընկալ տարբեր հիվանդությունների տեսքով:

Առողջ իմունհամակարգով և լիարժեք սնուցված օրգանիզմներում վերը նկարագրված 2 վիճակներն էլ չեն առաջանում:

Միայն թերսնունդը նորմալ իմունիտետի պայմաններում կարող է առաջացնել տարբեր ծանրության ինքնաանընկալ վիճակներ, հիվանդություններ, որոնք հեշտ



այլ նաև տարբեր երկարությամբ իրար միացած մնացած ամինաթթուների շղթաներ՝ սպիտակուցի կտորներ՝ պեպտիդներ:

Բացի թերսնունդից մարսվող բջիջների սպիտակուցների թերքայքայման և պեպտիդների առաջացման պատճառ կարող են հանդիսանալ 1000-ից ավելի ժառանգական և մի քանի ձեռքբերովի ժոնդիլի մոլեկուլային ֆիզիոլոգիային վիճակներ, որոնց դեպքում առանց թերսնուցման էլ մակրոֆագերն ունեն թերություններ:

Օրգանիզմի գենետիկ ճանաչողությունից դուրս առաջացած այս պեպտիդ-

բուժելի են լիարժեք սննդով:

Միայն իմունոդեֆիցիտը, լիարժեք սնուցման պայմաններում, դրսևորվում է շատ թույլ, հիվանդությունների ձևավորման պատճառ չի հանդիսանում:

Եթե միաժամանակ կա և՛ թերսնուցում, և՛ իմունոդեֆիցիտ, ձևավորվում են ինքնաանընկալ տարբեր բնույթի և ծանրության հիվանդություններ, որոնց լիարժեք բուժումը հնարավոր չէ, սակայն լիարժեք սննդով կարելի է հասնել տևական, կառավարելի ախտադադարի, բարձրացնել կյանքի որակը:

Գուրգեն ՍԱՐԳՍՅԱՆ

## Սատուռնը ռեկորդակիր է դարձել արբանյակների թվաքանակով

Յուպիտերն առաջնությունը Սատուռնին է զիջել Արեգակնային համակարգում հայտնի արբանյակների թվաքանակով: Ավելի վաղ հայտնի էր, որ Յուպիտերն ունի 79 արբանյակ, իսկ Սատուռնը՝ 62:

Հոկտեմբերի 7-ին հայտնի դարձավ, որ աստղագետները՝ ամերիկյան Քառնեգի ինստիտուտի աշխատակից Սթեֆան Զեփարդի ղեկավարությամբ, ևս 20 նոր արբանյակ են հայտնաբերել Սատուռնի շուրջը: Այսպիսով, դրանց ընդհանուր թիվն ավելացել է մինչև 82, և զազային այդ իսկական ռեկորդակիր է դարձել հայտնի արբանյակների թվով: Հայտնագործությունն արվել է 8,2 մետր տրամագծով հայելի ունեցող «Սուբարու» աստղադիտակի օգնությամբ: Այն գտնվում է Հավայան կղզիների Մաուն-Քեա հրաբխի գագաթին, հաղորդել է «Ինտերֆաքս»-ը:





## Անվանի պատմաբան, «Հայկական հանրագիտարանի» գլխավոր խմբագիրը (Մակիչ Վահանի Արզումանյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մակիչ Վահանի Արզումանյանն այն գիտնականներից է, որ հսկայական գիտական ժառանգություն են թողել մեզ: Նրա անվան հետ են կապված հայ ժողովրդի պատմական ճակատագրին նվիրված բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ: Նա նաև այն բացառիկ մտավորականներից է, որին բախտ էր վիճակվել ավարտին հասցնելու «Հայկական սովետական հանրագիտարանի» («ՀՍՀ») հրատարակությունը և աշխարհին ներկայանալու որպես Հայկական առաջին հանրագիտարանի գլխավոր խմբագիրներից մեկը: Նա հեղինակ է նաև այդ հանրագիտարանի մի շարք առանցքային հոդվածների:

Մակիչ Արզումանյանը ծնվել է 1919 թ. հոկտեմբերի 25-ին պատմական Գարդմանք աշխարհում՝ Շամխորի շրջանի Բարուն գյուղում: Համալսարանական կրթությունը ստացել է ԵՊՀ-ում: Ընդ որում, համալսարան ընդունվել է 1938-ին, 3-րդ կուրսից՝ 1941-ի հոկտեմբերին, զորակոչվել է բանակ, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: Սակայն ղեկավարներին Ղրիմում վիրավորվել է, հոսպիտալում բուժվելուց հետո արձակուրդ է եկել և այդ ընթացքում՝ 1942-ին ավարտել է համալսարանը: Ապա վերադարձել է բանակ, կռվել Կովկասյան և 1-ին ու 4-րդ ուկրաինական ռազմաճակատներում: 1950-ին պաշտպանել է թեկնածուական, 1963-ին՝ դոկտորական ատենախոսություններ:

Պրոֆ. Արզումանյանը հանրագիտարան է եկել 1979-ին՝ խմբագրության համար բավական ծանր մի ժամանակ, երբ «ՀՍՀ» 5-րդ հատորի տպագրությունը ձախողվում էր: Խմբագրության աշխատակազմին նոր ղեկավար էր պետք, և ՀԿԿ կենտկոմն այդ գործին ավելի հարմար գտավ պրոֆ. Արզումանյանին, որն արդեն բարի համբավ ու անուն էր վաստակել իր 10-ից ավելի տպագրած մենագրություններով և 300-ից ավելի հոդվածներով:

Նա կարողացավ շատ արագ վերականգնել աշխատանքային կարգապահությունը խմբագրությունում, փոխեց ղեկավար կազմը (նվաստս հենց այդ ժամանակ է ընդունվել աշխատանքի՝ որպես գլխավոր խմբագրի տեղակալ՝ ճշգրիտ և բնական գիտությունների գծով):

Նա ավարտին հասցրեց հանրագիտարանի (12+1 հատոր) հրատարակությունը (նա է ստորագրել վերջին 8 հատորները) և հիմնադիր գլխավոր խմբագիր, գիտահրատարակչական խորհրդի և ԳԱԱ անփոփոխ նախագահ

Վիկտոր Համբարձումյանի, գլխավոր խմբագրի տեղակալ Ջավադ Թորոսյանի ու պատասխանատու քարտուղար, գրող Հայկ Խաչատրյանի հետ արժանացավ ՀԽՍՀ Պետական մրցանակի (1988):

Բայց բոլորիս համար շատ անակնկալ, որովհետև նա շատ կենսուրախ անձնավորություն էր, բացահայտվեց նրա անբուժելի հիվանդությունը, և նա վաղաժամ (1988-ի հուլիսի 20-ին) հրաժեշտ տվեց կյանքին: Այստեղ չեն կարող չհիշել նրա կատակով ասած խոսքերը՝ հատկապես երկարակեցության մասին: Նա, որ, բնականաբար, տարիքով մեծ էր, մեզ ասում էր. «... իմ հայրը 99 տարի է ապրել, իմացեք, հա՛...»:

Ավաղ, այդպես չեղավ, և Հայկական հանրագիտարանը Արզումանյան ընտանիքի, նրա հարազատների, բարե-

կամների ու ընկերների հետ մեծ կուրսուտ կոնց:

Պիտի արձանագրեմ, որ հանրագիտարանի աշխատակազմը համակրանքով էր վերաբերվում Արզումանյանին. բոլորը գոհ էին իրենց նկատմամբ նրա ուշադրության, իրենց աշխատանքն ըստ արժանվույն գնահատելու և առաջխաղացման համար: Ղեկավարի այդ հատկությունը բացառիկ գնահատելի է, և պատահական չէ, որ Մակիչ Վահանի-չի օրոք աշխատած մեր հնաբնակները նրա ղեկավարած տարիները համարում են Հանրագիտարանի ոսկե դարը: Նրա կենսուրախ բնավորությունն օգնում էր ավելի արդյունավետ աշխատելուն:

Պրոֆ. Արզումանյանի գիտական կենսագրությանն անդրադարձել են շատերը. անվանի պատմաբան Հրաչիկ Սիմոնյանը մասնավորապես գրել է. «Մեծ է Մ. Արզումանյանի ծառայությունը պատմական գիտությանը: Նրա ուսումնասիրությունները ոչ միայն բազմակողմանի հարուստ գիտելիքների ու լայն էրուդիցիայի արգասիք են, այլև անսպառ եռանդի ու անդուլ աշխատանքի արդյունք»:

Արժեքավոր են Մ. Արզումանյանի՝ ինչպես հեղափոխական շարժումներին, Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմությանը, բուլշևիկյան ականավոր գործիչների՝ Ասքանազ Մռավյանի, Սարգիս Մուսայելյանի, Արսեն Ամիրյանի, Սուրեն Սպանդարյանի, Ստեփան Շահումյանի կյանքին ու գործունեությանը, այնպես էլ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին, նրա դարավոր մաքառումներին նվիրված աշխատությունները:

1959 թ.-ին լույս է տեսել գիտնականի դոկտորական ատենախոսությունը, որը նվիրված էր Հայաստանի հեղափոխական շարժումներին և ընդգրկում էր 1907-17թթ. ժամանակաշրջանը: Այդ աշխատությանը նա լրացրել է պատմության բազմաթիվ սպիտակ էջեր, առաջին անգամ ընթերցողներին ներկայացրել անցյալի շատ իրողություններ:

Հատկանշական է, որ արդեն իր այս առաջին ծավալուն մենագրության մեջ նա խորհրդահայ պատմաբանների թվում առաջիններից է անդրադարձել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերի՝ արևմտահայության նկատմամբ իրականացրած եղեռնին, ցույց տվել զանգվածային կոտորածների ու աքսորի պատճառները, մեծ տերությունների մեղսակցությունը հայերի սպանդին և այլն: Աշխատության այդ բաժնում արժանանում են Մեծ եղեռնին վերաբերող գրեթե բոլոր այն հար-

ցադրումները, որոնք հետագայում զարգացնելու էին հայ պատմաբանները, նշել է Հ. Սիմոնյանը:

Խրուլչովյան «ծնիալի» տարիներին գիտնականն ամբողջովին նվիրվել է հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հարցերին: 1969 թ.-ին լույս տեսած նրա «Հայաստան. 1914-1917» մեծածավալ (780 էջ) աշխատությունն արժեքավոր ներդրում էր հայ պատմագրության մեջ: Հեղինակն այդտեղ ներկայացրել է Հայաստանի արևմտյան և արևելյան մասերի պատկերն Առաջին աշխարհամարտի նախօրյակին, մերկացրել մեծ տերությունների երկդիմի քաղաքականությունը Հայկական հարցում, մանրամասն նկարագրել 1915-16 թթ-ի զարհուրելի դեպքերը: Նա ընթերցողին մտովի մասնակից է դարձնում նաև հայոց հերոսական

դիմադրության պատմությանը՝ անդրադառնալով Վանի, Շատախի, Շապին-Գարահիսարի, Ուրֆայի և այլ վայրերի հերոսամարտերին:

«Արիավիրքից վերածնունդ» (1973) ծավալուն մենագրությանը գիտնականն ամողջացրել է այն մեծ հիմնախնդրի ուսումնասիրությունը, որին նա տարիներ էր նվիրել: Գրքում նա նախ բնութագրել է «աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի՝ հայերի անցած ուղին», միաժամանակ կարևորել հայ ժողովրդի մղած դասակարգային պայքարը, ինչպես նաև ցույց տվել, որ հայերի դիմանկարը հատկապես ձևավորվել է ներքին կյանքով, տնտեսական ու մշակութային շինարարությամբ:

1977 թ.-ին գիտնականը հրատարակեց իր առավել հետաքրքիր ու արժեքավոր «Նանսենը և Հայաստանը» գիրքը: Այդ գիրքը, ըստ էության, հայ ժողովրդի խոր երաստագիտության տուրք է, նրա հավերժ շնորհակալությունը մարդկության այդ բարի հանճարին: Գրքի վերջին էջերում հեղինակն այն միտքն է հայտնել, որ հայ ժողովուրդը վաղ թե ուշ երևանում կանգնեցնելու է Ֆրիտյոֆ Նանսենի հուշարձանը՝ որպես նրա նկատմամբ հավերժ սիրո խորհրդանիշ:

Ինչպես գիտեք, գիտնականի այդ ցանկությունն ի կատար ածվեց մեծ հունահիստի ծննդյան 150-ամյակին (2011 թ.-ին), երբ երևանում ոչ միայն նրա հուշարձանը, այլև Նանսենյան անձնագրի արձան տեղադրվեց, և բացվեց Նանսենի թանգարան:

Պատմաբանի վերջին՝ «Դարավոր գոյամարտ» (շուրջ 800 էջ) աշխատությունը լույս տեսավ 1989 թ.-ին՝ հետմահու: Այս գիրքը, ըստ էության, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության գիտական լուսաբանման ուղղությամբ հայ պատմաբանների կատարած աշխատանքի յուրովի ամբողջացումն ու ամփոփումն է:

Ավարտելով մեր այս համառոտ խոսքը մեծ գիտնականի և մշակութային գործիչ մասին՝ ասենք, որ պրոֆ. Մակիչ Արզումանյանը սերունդներին հիրավի թողել է գիտական հսկայական ժառանգություն և բարի հիշատակ: Նրա անունն անխափոփոխ կապված է Հայոց առաջին հանրագիտարանի ստեղծման հետ, որը հայ մշակույթի պատմության յուրահատուկ և հատկապես արժեքավոր էջերից է:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:

**Յովհաննես ԱՅՎԱԶՅԱՆ**  
Հայկական հանրագիտարանի  
գլխավոր խմբագիր-տնօրեն

### Իզոր Չասլավսկի



Կյանքից հեռացավ ականավոր մաթեմատիկոս, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Իզոր Չասլավսկին

Հայաստանի գիտությունը մեծ կուրսուտ ունեցավ: Կյանքից հեռացավ ականավոր մաթեմատիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Հայոց փիլիսոփայության ակադեմիայի անդամ Իզոր Դմիտրի Չասլավսկին:

Իզոր Չասլավսկին ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի (նախկին ՀԳԱ հաշվողական կենտրոնի) հիմնադիր գիտնականներից էր: Նա մեծ ավանդ ունի Հայաստանում մաթեմատիկական տրամաբանության, ալգորիթմների տեսության և մաթեմատիկական կիբեռնետիկայի բնագավառի զարգացման գործում:

Իզոր Չասլավսկու գիտական աշխատանքները վերաբերել են մաթեմատիկական տրամաբանությանը և կոնստրուկտիվ մաթեմատիկային: Չասլավսկին Հայաստանում ստեղծել է մաթեմատիկական տրամաբանության դպրոցը: Նրա աշակերտները զարգացրել են հանրապետության համար այնպիսի կարևոր ուղղություններ, ինչպիսիք են՝ ալգորիթմների բարդություններ, արհեստական բանականություն և այլ ուղղություններ՝ ներգրավելով երիտասարդ կադրեր:

Պրոֆեսոր Իզոր Չասլավսկու ելույթները միջազգային բարձր վարկանիշ ունեցող գիտաժողովներում միջազգային համագործակցության նոր հեռանկարներ են բացել հայ գիտական կազմակերպությունների համար:

Իզոր Չասլավսկին ծնվել է 1932 թվականին՝ Լենինգրադում: 1954 թվականին ավարտել է Լենինգրադի պետական համալսարանը: Նրա ուսուցիչներն են եղել հայտնի մաթեմատիկոսներ Ա. Ա. Մարկովը և Ա. Շանինը: 1959 թվականից աշխատել է ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում՝ բաժնի վարիչ, գիտության գծով տնօրենի տեղակալ, մաթեմատիկական տրամաբանության և ավտոմատացված տրամաբանական արտածման լաբորատորիայի գլխավոր գիտաշխատող: 1961 թվականից դասավանդել է Երևանի պետական համալսարանում, հետագայում նաև Հայ-Ռուսական համալսարանում և դաստիարակել է բազմաթիվ երիտասարդ մասնագետներ:

Պրոֆեսոր. Իզոր Չասլավսկին եղել է տարբեր գիտական հանդեսների խմբագրությունների և մասնագիտացված խորհուրդների անդամ:

Չասլավսկին մեծ մտավորական էր, համեստ և բարոյական բարձր արժեքների տեր անձնավորություն: Ուներ հետաքրքրություններ լայն շրջանակ՝ մաթեմատիկայի հիմունքների փիլիսոփայական հարցեր, մեքենայական թարգմանություն, մաթեմատիկական լեզվաբանություն, երաժշտություն:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքը, ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը, գիտական հանրությունը սգում են անվանի գիտնականի մահը և իրենց ցավակցությունն են հայտնում պրոֆեսոր Իզոր Չասլավսկու ընտանիքին, հարազատներին և գործընկերներին:



## «ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ» ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՄԱՐԸ...

Վաղուց պահանջված գիտական օրգանի՝ «Արվեստագիտական հանդես»-ի ծնունդն արդեն կայացված իրողություն է: Այն հանդես է եկել որպես 33 ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական հրատարակություն:

Ընթերցողի գրասեղանին է հանդեսի ամսագրի համարը, որը բացվում է արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, 33 ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, 33 ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանի ներածական խոսքով: Նրանում նշվում է, որ անցած տասնամյակների ընթացքում գիտության մյուս ճյուղերին զուգընթաց մեծ թափով զարգացավ արվեստագիտությունը՝ բարձրանալով որակապես նոր մակարդակի: Սակայն այսօր գիտության մյուս ճյուղերում, այնպես էլ արվեստագիտության բնագավառում կան բազում չլուսաբանված հիմնախնդիրներ, գիտական մանրազննիչ ուսումնասիրության և արդիականության դիրքերից վերազնադատման կարոտ բազմաթիվ և բազմապիսի հարցեր ու հարցադրումներ, որոնց քննարկմանը, քննությանը և լուծմանը է միտված սույն պարբերականը:

«Արվեստագիտական հանդես»-ի խմբագրությունն ու խմբագրական խորհուրդը նպատակադրվել են խորությամբ լուսաբանել հայ արվեստի և ճարտարապետության հիմնախնդիրները, ինչպես նաև հայ ժողովրդի մշակութային կապերը հարևան և մյուս ժողովուրդների հետ:

Արվեստագիտական հիմնահարցերի քննարկմանը նպաստելու նպատակով հանդեսը կունենա գիտական քննարկումների բաժին, որը ժամկետային է ստեղծագործական բանավեճերի ծավալմանը:

«Արվեստագիտական հանդեսի» ուշադրության կենտրոնում կլինեն նաև գեղարվեստական կյանքի արդի



խնդիրները, 3այաստանի և Արցախի 3անրապետություններում և հայկական Սփյուռքում ընթացող գեղարվեստական գործընթացները, դրանց խորունկ հետազոտության գիտատեսական նրբին իմաստավորման խնդիրները:

Ամերիկյան համարում գետեղված կարևորագույն նյութերի շարքում են Ամնա Ասատրյանի «Տիգրան Զուխանյանը՝ Բազմալեզու հանդեսի էջերում», Մարիաննա Տիգրանյանի «Շուններական էպոսի հետքերը հայկական ժողովրդական ավետիսներում», Նազենիկ Սարգսյանի ««Հեղինակայինության վերաբերյալ» խորհրդաձևի մեկնաբանությունը», Անահիտ Զեյնի «Սմբատ Բյուրատի «Վարդանանք» եգիպտահայ թատրոնում և կինոյում. Խաչիկ Սանդալյան», Մարգարիտա Քամալյանի «Կոնստանտին Ալաջալով (1900-1987). Կյանքը և ստեղծագործությունը», Սաթենիկ Մելիքյանի «Ծաղրանկարչական ժանրի առանձնահատկությունների շուրջ», Մարտին Զարությունյանի «Թբիլիսի-Երևան. ճարտարապետագիտական հիմնախնդիրներ», Դավիթ Քերթնեյանի «1915թ. 3այոց ցեղասպանության հետևանքով ճարտարապետական

լքված ժառանգության հատուցման խնդիրները», ինչպես նաև Զահրա Մալեքի (Իրան) «Պարսկական դասական պոեզիայի արտացոլումը Իրանի միջնադարյան նկարչության մեջ», Ալեքսեյ Ժադեյկոյի (Ուկրաինա) «Վալերի Գեղամյանի կյանքը և ստեղծագործական ուղին» և այլ հրապարակումներ:

Հանդեսի «Հրապարակումներ» բաժնում առաջին անգամ հատվածաբար հրապարակվել է համաշխարհային բեմահարթակ բարձրացած հայ առաջին խոշոր ջութակահար Դովհանես Նալբանդյանի հուշագրությունը իսպանացի աշխարհահռչակ ջութակահար և կոմպոզիտոր Պաբլո Սարասատեի մասին:

Հանդեսի խմբագրական խորհրդում ընդգրկված են ամվանի ու վաստակաշատ գիտնականներ՝ ինչպես 3այաստանից, այնպես էլ արտերկրից (Ուկրաինայի արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Զեյնալով, ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Տատյանա Յուրևա, Բելառուսի արվեստի վաստակավոր գործիչ, Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի պատվավոր անդամ, արվեստագիտության թեկնածու Վլադիմիր Պրոկոպցով և ուրիշներ): Գլխավոր խմբագիրն է 33 ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, 33 արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ամնա Ասատրյանը:

**Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**  
Պատմական գիտությունների  
թեկնածու, 33 լրագրողների  
միության անդամ



## Համիկ Սենեքերիմի Մանասերյան (1925-2019)

94 տարեկան հասակում կյանքից հեռացավ վաստակաշատ հայուհի Համիկ Մանասերյանը, ով մեծ ավանդ ունի հայրենական մատենագիտական գործի ասպարեզում:

Համիկ Մանասերյանը ծնվել է 1925 թ. Երևան քաղաքում: 1943-1949 թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1967-1979 թթ. աշխատել է Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրությունում՝ որպես ավագ գիտխմբագիր: Գլխավորել է ՀԱՀ մատենագիտության աշխատանքները և մասնակցել լեզվի, գրականության ու մամուլի հոդվածների գիտական վերահսկողությանը: 1979-2002 թթ. զբաղեցրել է 33 ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի գիտական գծով փոխտնօրենի պաշտոնը: Լինելով բարեխիղճ և անձնվեր աշխատող, նա մեծ դեր է ունեցել գրադարանի աշխատանքները բարձր մակարդակով կազմակերպելու գործում և վայելել է աշխատակիցների սերն ու հարգանքը:

Համիկ Մանասերյանի հիշատակը միշտ վառ կմնա նրան ծանաչողների սրտերում: 33 ԳԱԱ հիմնարար գիտական գրադարան

## Ն Ա Յ Ե Ր Ա Ր ՈՒԹ Յ ՈՒ Ն

### Ռեմարկը և ժամանակակիցների արելությունը

Է. Մ. Ռեմարկի հաջողությունները նախանձաբեկ էին անում շատերին: Եվ դա հատկապես այն տարիներին, երբ գերմանագիր գրեթե բոլոր աքսորյալները (Ալֆրեդ Դյուբլին, Բերթոլդ Բրեխտ, Ռոբերտ Մուզիլ, Հայնրիխ Մանն) կորցնում էին իրենց ընթերցողներին: Միայն թե կարդաս՝ ինչ ժաիր էին թափում ժամանակի ամենաշատ թարգմանվող հեղինակների՝ Է. Մ. Ռեմարկի, Լ. Ֆեյխթվանգերի և Շ. Յվայգի գլխին ու նեմգ քննադատություններ հնչեցնում «մեծ գրողների» հասցեին: Ռեմարկը, ի հեճուկս այդ ամենի, շարունակում էր վայելել փառքի իր դասիկները: Նա այդ ժամանակ էլ հարուստ էր, նրա գրքերը լույս էին տեսնում մեծ տպաքանակով, ֆիլմեր էին նկարահանվում դրանց հիման վրա ու քննարկվում միջազգային մեդիա-հարթակներում:

Ռեմարկի պրոզան հասարակ է, նրա պատմություններն ուղղագիծ են և ուշագրավ: Նրա գրքերը շատ լավ են, ոչ շատ ճշգրտ: Հենց այս հատկանիշների շնորհիվ է, որ ընթերցողը չի վախենում:

Ալֆրեդ Պոլցարը «Երեք ընկեր» վեպի մասին իր գրախոսականում հետևյալ խոստովանությունն է անում. «Ռեմարկը վարպետորեն է պատմում, սեղմ, հակիրճ, մանրուքների նկատմամբ ուշադիր, անմիջական լեզվով: Ակնթարթի պահած շունչն է դրանում»:

1929 թ. Ս. Յվայգը գրում է Ռոմեն Ռոլանին. «Գերմանիայի նացիոնալիստները հուսահատ են: Ռեմարկի «Արևմտյան ճակատում նորություն չկա» վեպը՝ 12 շաբաթում 600.000 առկա և միլիոնի ձգտող տպաքանակով, տապալել է նրանց: Այդ անպաճույճ, ճշմարիտ գիրքն ավելի շատ բան է շտկել, քան այս տասը տարիների պացիֆիստական բոլոր քարոզները»:

Նույն թվականին է. Հեմինգուեյը Ֆ. Սքոթ Ֆիցջերալդին հետևյալն է գրում. «Ծիծաղելի է, որ սկզբում չէի կարողանում խորանալ «Արևմտյան ճակատի» մեջ, բայց հենց սկսեցի, պարզվեց՝ չտեսնված բան է»:



### Սոցցանցերը բացասաբար են ազդում դեռահասների հոգեկան առողջության վրա

Սոցցանցերը բացասաբար են ազդում դեռահասների հոգեկան առողջության վրա: Լոնդոնի համալսարանական քոլեջի գիտնականները նշում են, որ սոցցանցերում երկար ժամանակ անցկացնելն աղջիկների մոտ բարձրացնում է հուզականությունը 28%-ով:

Հետազոտության շրջանակում, որը հրապարակվել է «The Lancet Child and Adolescent Health» ամսագրում, գիտնականները վերլուծել են Անգլիայի տարածքում ավելի քան հազար դպրոցներում սովորող 13 հազար դեռահասների տվյալները: Պարզվել է՝ սոցցանցերը բացասաբար են ազդում նրանց հոգեկանի վրա, ընդ որում, դա հիմնականում վերաբերում է աղջիկներին, քան տղաներին:



Բացի այդ, սոցցանցերից կախվածությունը մեծացնում է կիբեր-բուլլինգի նկատմամբ աղջիկների խոցելությունը, ինչը կարող է քնի և ֆիզիկական ակտիվության պակասի պատճառ դառնալ:

Գիտնականների կարծիքով՝ հաճախակի կարելի է համարել օրական 3 կամ ավելի անգամ սոցցանցերի կիրառումը: Այդ կապակցությամբ գիտնականները խորհուրդ են տալիս նվազեցնել սոցցանցերի կիրառումն ու շատ ժամանակ տրամադրել կենդանի շփմանը:

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒԹ Յ ՈՒ Ն

33 ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ արդի հայերենի բաժնի ավագ գիտաշխատողի և բառարանագրության բաժնի կրտսեր գիտաշխատողի թափուր տեղերի համար:

Մրցույթին կարող են մասնակցել՝

ա/ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող գիտնականները,  
բ/ մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող մասնագետները:  
Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում,  
բ) լուսանկար,  
գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,  
դ) ինքնակենսագրություն,  
ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն,  
զ) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճեն.

է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,  
ը) տեղեկանք մշտական բնակության վայրից,  
թ) հրատարակված աշխատանքների ցանկ,  
ժ) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում),  
ժա) բնութագիր վերջին աշխատավայրից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորչի 15, 33 ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. (060) 62-35-77:

## Գիտություն

**Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

**Երևան-19, Մարշալ Բաղդամյան 24բ, հեռ. 56-80-14, 077 31 63 76**

**Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 22.10.2019 թ.:**

"ГИТУТИОН" ("Найка") газета НАН РА